Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար համար տեքստիլի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-23/4 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

22 մարտի 2023թ.
ժամը՝ 10.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մամբրեյան, Ա.Խուդինյան, Տ.Բաղալյան, Մ.Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)***
1	տեքստիլի մաքրման ծառայություններ	50000
2	տեքստիլի մաքրման ծառայություններ	198000
3	տեքստիլի մաքրման ծառայություններ	750000
4	տեքստիլի մաքրման ծառայություններ	1000000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 20.03.2023թ.-ին ժամը 10:00-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 21.03.2023 թ.-ին ժամը 10:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների փվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ	ք. Երևան, Իսահակյան թղմ. շ 2/1 , բն. 13	077607451	davitgrigoryan89@mail.ru
2	ԱՄՈՒՐ ԳՍՄ ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի պող. 54Ա	044180008	amurgsm@mail.ru
3	Արտաշես Սահակյան ԱՁ	Թբիլիսյան խճ. 35/1, բ. 50	044188858	-
4	ԱՁ Աստղիկ Մարտիրոսյան	Ֆուչիկի 2նրբ 1 17բ	096701010	-
5	ԷՅՋԻՋԻ ՍՊԸ	ք. Երևան, Արշակունյաց պ./Շ/39/9/90	096701010	-

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-23/4 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ	50000	0 %	50000	39500	0 %	39500.00	
	ԱՄՈՒՐ ԳՍՄ ՍՊԸ	49000	0 %	49000	40000	0 %	40000.00	
	Արտաշես Սահակյան ԱՁ	60000	0 %	60000	60000	0 %	60000.00	Մերժված
2	ԱՄՈՒՐ ԳՍՄ ՍՊԸ	197000	0 %	197000	150000	0 %	150000.00	
	Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ	198000	0 %	198000	158000	0 %	158000.00	
	Արտաշես Սահակյան ԱՁ	214500	0 %	214500	214500	0 %	214500.00	Մերժված
3	ԱՄՈՒՐ ԳՍՄ ՍՊԸ	749000	0 %	749000	300000	0 %	300000.00	
	ԱՁ Աստղիկ Մարտիրոսյան	750000	0 %	750000	335750	0 %	335750.00	
	Արտաշես Սահակյան ԱՁ	800000	0 %	800000	342500	0 %	342500.00	
	Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ	750000	0 %	750000	586000	0 %	586000.00	
	ԷՅՋԻՋԻ ՍՊԸ	675000	20 %	810000	625000	20 %	750000.00	
4	ԱՄՈՒՐ ԳՍՄ ՍՊԸ	999000	0 %	999000	270000	0 %	270000.00	
	Արտաշես Սահակյան ԱՁ	1000000	0 %	1000000	280000	0 %	280000.00	
	ԱՁ Աստղիկ Մարտիրոսյան	1000000	0 %	1000000	300010	0 %	300010.00	
	ԷՅՋԻՋԻ ՍՊԸ	1000000	20 %	1200000	490010	20 %	588012.00	
	Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ	1000000	0 %	1000000	690000	0 %	690000.00	

Աճուրդն ամփոփվել 21.03.2023 թվականին: Ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ-ն, Ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է ԱՄՈՒՐ ԳՍՄ ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ-ի և «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերը /հայտում առկա փաստաթղթեր/, արձանագրեց՝

- Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ-ի հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:
- «Ամուր ԳՍՄ» ՍՊԸ-ի՝ հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում՝ (Հավելված 1.2) 4-րդ բաժնի 4.3 ենթաբաժնի 4.3.2 և 4.3.3 և 4.4 ենթաբաժնի 4.4.2 և 4.4.3 կետերը ենթակա են շտկման, անհրաժեշտ է վարչատարածքային միավորը նշել «Լոռի», քանի որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները, իսկ Համայնքը՝ «Վանաձոր»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-23/4 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց 22.03.2023թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 24.03.2023թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 24.03.2023թ. ժամը 10:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ-ի և «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման վերաբերյալ

24.03.2023 թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- Դավիթ Գրիգորյան Դավիթի ԱՁ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով մյուս մասնակիցների հայտերը մերժել:
- «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժնով մյուս մասնակիցների հայտերը մերժել:

10.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Վաչե Մամբրեյան

_____ Ավետիք Խուդինյան

_____ Տիգրան Բաղալյան

_____ Մարիամ Համբարձումյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան